

“ՀԱՆՌԷՍ ԱՄՍՈՐԵԱՅԻ, ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

Մեր անկեղծ շնորհակալութիւնը ամէն անոնց, որոնք խոր գիտակցութեամբ Ուսումնաթերթիս կարեւորութեան եւ անոր ազգային քանասիրութեան մատուցած օգտակար ծառայութեան՝ արտայայտեցին իրենց համակրութիւնն քանի եւ գործով: Ասով ոչ միայն քաջալերեցին խմբագրութիւնս իւր ընտրած ճանապարհին վրայ: անասանն ընթանալու, այլ եւ մղում՝ տուին հայ քանասիրութեան մշակման: 35 տարիէ ի վեր գործեց “Հանդէս Ամսօրեայի”, որոշ ուղղութեամբ, հայագիտական ուսմանց ասպարեզին վրայ, եւ արտադրեց անգնահատելի արդիւնք: “Հանդէս Ամսօրեայի”, հաւաքածոյքը այսօր ամենալի շտեմարան մը կը ներկայացնէ, որ համբարած է հայ քանասիրութիւնն իւր լաւագոյն բերքերը: Տոհմային ուսմունքը քարգացան հոն իրենց ամէն ճիւղերով: Կը քսէ ակնարկ մը 35 տարիներու քովանդակութեան վրայ՝ համոզուելու համար:

Եթէ այս՝ գոհունակութիւն կը պատճառէ Խմբագրութեանս, անշուշտ մի եւ նոյն ժամանակ պարծանք մըն է Ազգին համար ալ, որ ունեցաւ Ուսումնաթերթ մը, որ հետազօտուեցաւ իւր հին քաղաքակրթութեան պատմութիւնն եւ սեպհական գրականութիւնը:

Խմբագրութեանս միակ բաղձանքն էր շատ տարիներէ ի վեր նիւթապէս ապահոված տեսնել իւր սիրելի եւ փայփայած Ուսումնաթերթը, որ իւր կոյս ճանապարհին վրայ ենթարկուած էր ամենազգի դժուարութեանց: Դժուարութիւններն զգալի հեղան մանաւանդ ներկայ օրհասական շրջանին, երբ նոյն իսկ քաղաքակրթ ժողովուրդներու Ուսումնաթերթերը քաղիւնցան դժուարութիւններու եւ պարտութիւններու վանեցան:

Անկեղծ շնորհակալութիւն հայ քանասիրութեան հաւատարիմ՝ քարեկամներու, որոնք պատեհ ժամին փութացին ձեռք կարկառել Խմբագրութեանս, եւ ոչ միայն լծողուցին որ անհկա ընկրկի նիւթական խոշնորոտներու առջեւ, այլ եւ խորհեցան մեջոցներու վրայ՝ ընդ միշտ ապահովելու անոր նիւթական դրութիւնը ամուր հիմքով վրայ:

Խորհեցան ի նպաստ “Հանդիսի”, հիմնադրամ մը գոյացնել: “Հանդէս Ամսօրեայի”, համար հիմնադրամ մը կազմելու առաջին ձեռնարկութիւնն եղաւ տասնեակ տարի յառաջ առթիւ անոր 25ամեայ յոբելեանին: Բայց այն շրջանին առանց զգալի արդիւնքի: Մեծ հարուածը, որ լացուց Ազգը մեծ պատերազմի օրերուն եւ ցնցեց հայ սրտերը, փոփոխութիւն բերաւ նաեւ այս նկատմամբ: Ցնցման տակ աւելի բարձր գնահատուեցաւ “Հանդիսի”, կերպով թէ երբ քովանդակ հայ մասնական մշակման պէտքը: Նկատուեցաւ զգալի կերպով հարցերու անձնատուր եղաւ եւ մուլն օրուան աղէտին ճնշման տակ կամ՝ առօրեայ հարցերու անձնատուր եղաւ եւ կամ՝ կորսնցուց իւր ուղին, “Հանդէսն”, միայն իւր շաղկապ վրայ մնաց անստերիւր,